№ 32. ՕԳՈՍՏՈՍԻ 14. 1875 ՕԳՈՍՏՈՍԻ 14. № 32.

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 րուբլի, կէս տարվանը 3 րուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում։

Օտարքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ, Редакція „Мшакъ."

Խմբագրատունը բաց է առաւօտեան 9—12 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառից մի կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր հաշիւը հին սերունդի հետ։ — Ներքին տեսութիւն։ Ծառապտուղների գործադրութիւնը։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Ներքին-Ագուլիսի։ Նամակ Շամախուց։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Գերմանիա։ Թիւրքիա։ — Խառն լուրեր։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Ֆելիէտօն։

ՄԵՐ ՀԱՇԻՒԸ ՀԻՆ ՍԵՐՈՒՆԴԻ ՀԵՏ

Ի՞նչ բանի էք պատրաստում դուք նոր սերունդը։

Պետութեան քաղաքացիներ լինելու, — այդպէս չէ՞....

Բայց ի՞նչ միջոցներ էք գործ դնում դուք այդ նպատակին հասնելու համար, — դժբաղդաբար, պէտք է խոստովանած, այնպիսի միջոցներ, որք իսկ հակառակ հետևանքին են հասցնում։

Մենք խօսում ենք մեր հայոց հին սերունդի, այն հայերի վրա, որք Ռուսիայումն են ապրում։

Ի՞նչ պէտք է լինի քաղաքացի, ի՞նչ տեսակ յատկութիւն ունեցող քաղաքացի աւելի օգտաւէտ է պետութեան համար, ի՞նչ տեսակ միջոցներ է գործ դնում, ահա, քանի տարի շարունակ ինքն տէրութիւնը, որ պատրաստվեն ինքնուրոյն բնաւորութիւն ունեցող, ընդունակ, պիտանի քաղաքացիներ։ Ահա քանի տարի է որ տէրութիւնը մտցնում է մի վերանորոգութիւն միւս վերանորոգութենից յետոյ, այնպիսի վերանորոգութիւններ որք հակվում են դէպի մի նպատակ՝ անհատապէս զարգացած քաղաքացիներ ունենալու։ Քայլ առ քայլ սարուկներին ազատելով, մարմնական պատիժներ վերցնելով, քաղաքներին և համայնքին ինքնավարութիւն տալով, վերջապէս ընդհանուր զինուորագրութիւն յայտնելով, տէրութիւնը ցոյց է տալիս որ փոքր առ փոքր կամենում է վարժեցնել քաղաքացիներին հասարակական իրաւունքները վայելելու։

Իսկ դուք, հին սերունդ, ի՞նչ էք անում, — նպաստում էք արդեօք ձեր վարմունքով նոր սերունդի հետ այդ տեսակ անհատական կերպով զարգացած քաղաքացիներ պատրաստելուն։

Ձեր իդէալն է՝ կրաւորական մարդ, իր ինքնուրոյնութենից, իր անհատութենից զրկված էակ....

Ձեզ տալիս են ինքնավարութիւն, — դուք ընծայում էք այդ ինքնավարութեանը անընդունակ, կրաւորական անձինք։

Այդպէ՞ս էք նպաստում դուք վերանորոգութիւններին։

Ձեր իդէալն է՝ դաստիարակել, կրթել նոր սերունդը այնպէս, որ նա դառնայ որքան կարելի է կրաւորական, որքան կարելի է զուրկ անհատական գաղափարներից, սեփական համոզմունքներից։

Ձեր նպատակն է չունենալ մրցողներ ձեր չորս կողմը՝ քանի որ կենդանի էք, և այս նպատակին հասնելու համար, շատ լաւ էք հասկանում, որ ամենալաւ միջոցն է՝ երեխայութենից մինչև երիտասարդական հասակը անդադար ստորացնել նոր սերունդը, մինչև այն աստիճան ստորացնել, որ նա կորցնի հաւատը դէպի իր սեփական ոյժերը, դառնայ կրաւորական, յուսահատվի և հասակից առաջ պառաւի։

Ձեր նպատակն է վարվել ձեզ խանգարող նոր սերունդի հետ այնպէս, որ նա վերջը ինքն իրան արհամարհէ, ինքն իրան բանի տեղ չը դնի։ Այն ժամանակ դուք գոհ էք, — դուք հասաք ձեր նպատակին....

Շատ լաւ էք հասկացել դուք պետական վերանորոգութիւնների ոգին, շատ ընդունակ քաղաքացիներ կը պատրաստէք դուք ապագայ վերանորոգութիւնների համար, շատ լաւ հայրեր կը պատրաստէք դուք իրանց կողմից նոր սերունդ դաստիարակելու համար...

Տէրութենից արած վերանորոգութիւնները շատ դժուար կարող են պատուաստվել պետութեան մէջ մինչև որ իրան հասարակութեան կողմից չը լինի դրական և գործնական արձագանք....

Բայց ո՞ւր է այդ հիմնաւոր արձագանքը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԾԱՌԱՊՏՈՒՂՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հասունացած պտուղների հետ ամենայն կերպ կարելի է վարուիլ. կեր, ծախիր, չորացրու, ինչպէս կամենում ես։ Առաջինի կողմից մեզ մօտ չափ ու սահման չը կայ. օրինակները բազմաթիւ են, որ շատերը սաստիկ մրգեղէն ուտելուց օրերով և ամիսներով արնաքում են, ենթարկուելով ջերմի ներգործութեանը։ Երկրորդն, արդարև, ձեռնտու է, բայց ոչ մեր այգեգործների համար, որոնք հրապարակ տարած մրգերը, չը կարողանալով լաւ գնով ծախել, շատ անգամ տուն են յետ տանում և միւս օրը դարձեալ դուրս բերում։ Մեր Երևանում ամենայարմարը չորացնելն է. բայց դուք տեսէ՛ք. այդ չնչին ու ամենահեշտ միջոցն էլ չէ կարողանում մեր ժողովուրդը կատարելապէս գլուխ հասցնել։ Ահա թէ ինչպէս է չորացնում օրինակի համար ծիրանը, մեր այգիների արդասիքներից այդ գլխաւորը։ Պտուղը, երբ հասնում է, թափ են տալիս, սաստիկ հասունութիւնից փխրած ծիրանները խառը միւսների հետ հաւաքում են և տանում մի որ և է տեղ հողի վերա վեր ածում, առանց ուշ դարձնելու, թէ գուցէ անձրև գայ, փչացնի նորան։ Ծիրանը դեռ ևս կիսաչորացած, անձրևը գալիս է. փտած մրգերը ցեխի մէջ են շաղախվում։ Պտուղը, որ պիտի տասն օրում չորանար, նրա չորանալը տևում է երեք շաբաթ. յետոյ գալիս են և ժողովում են ցնցում ապականուած ծիրանաչիրը. նորան անկարելի է այնպէս վաճառահանել. պարտաւորուած լուանում են և նորից չորացնում, այս անգամ շորի վրա փռելով։ Այս բոլորից յետոյ բերքն 'ի հարկէ, տարվում է փողոց ծախուելու։ Կրօնամոլ թուրք մրգավաճառը տեսնում է որ միրգը լուացած է հողի սրբապիղծ (?) ձեռքերով. նա կամ բոլորովին խորշում է նորանից և հեռանում և կամ լիտրին տասն կոպէկ աժան գին է տալիս։ Գործին մի աչքով նայելն ահա այս հետևանքին է հասցնում մարդուն։ Այս առթիւ մենք կ'ասենք մեր այգեգործներին՝ պտուղ չորացնողն անպատճառ պէտք է ունենայ իւր համար փախթներ, որոց գինը շատ աննշան է, ուրեմն ամենքի համար մատչելի։ Այդ կերպով

ՖԵԼԻԷՏՕՆ

Խեղճ «Մշակ»։ — Դաշտի մշակութիւնը և հին աւերակները։ — Քարեր և փտած արմատներ։ — Աւանդութիւններ։ — Պէտք է քանդել նախ քան շինել։ — Հրաշքների դարը անցաւ։ — Աւերակների պաշտպաններ։ — Պ. Էրիցովին ներում ենք։ — «Մեղու», „Кавказъ", Ստալինսկի և Nemo-ներ։ — «Արշալոյս Արարատեան»։ — Մեր փնթի սեռը զզված է մեզանից։ — Մենք Ասիայումն ենք ապրում։ — Մի նոր մեթօդ։ — Հոգեբանական ճշմարտութիւն և պ. Մանդինեան։ — Ասիացու թաղումը։ — Մի մարդ համակրում է մեզ։ — Կայծակ։ — Դառնում եմ բանաստեղծ։

Ամեն կողմից յարձակմունքներ խեղճ „Մշակի" վրա։ Թշնամիները բազմանում են օրից օր, աւելի կատաղում են մեր դէմ....

Պատասխանել ամենքին ծանր, մշակված յօդվածներով միայն ի զուր տեղ կը բռնէր „Մշակի" էջերում։ Այս տեսակ գիպուածներում խմբագրութիւնը ասում է ֆելիէտօնիստին՝ „դուք պատասխանեցէք, խնդրեմ, մանաւանդ որ վաղուց է բան չէք գրել...."

Կը գրենք, կը գրենք, պ. խմբագիր....

Մի մշակ դուրս է գալիս դաշտը, հողը վարելու համար, լծում է իր ձին (չէ այդ Եւրոպայումն են ձի լծում արօրին, իսկ Ասիայում եզներ են լծում) ուրեմն լծում է մի տաս հատ եզ և սկսում է ակօսել գետինը (ափսոս որ էշերին արօրին լծել չէ կարելի, — այն ժամանակ գոնէ այդ կենդանիները պարապ չէին ման գայ....)

Չը շեղվենք մեր հարցից՝ մի մշակ դուրս է գալիս դաշտը, ձեռքը արօրի վրա դրած, քշելով իր եզներին, սկսում է վարել երկիրը։ Յանկարծ նա պատահում է քարերի, — արօրը կանգնեցնում է, պէտք է մաքրի գետինը, նախ քան սկսի սերմը ցանել.... Նայում է աջ կողմը՝ մի հին շինութեան աւերակ է կանգնած, որ դաշտի վրա ի զուր տեղն է բռնում, ձախ կողմն է նայում, նոյնպէս մի անպէտք և աննշան աւերակի կարգն է տեսնում։ Կանգ է առնում խեղճ մշակը իր աշխատանքի մէջ, մտածում է՝ լաւ չէր լինի նախ և առաջ քանդեմ այդ աւերակները, մաքրեմ գետինը, խառնեմ հողը անպէտք քարերից և հողի մէջ մնացած զանազան հին բոյսերի փտած, կամակոր, պինդ արմատներից, — և յետոյ սկսեմ ակօսել հողը....

Նա այդպէս մտածելուց յետոյ, վճռում է անել այն, ինչ որ մտածել է։ Վերցնում է բահը ու սկսում է մաքրել հողը քարերից. վերցնում է լինգը և ուզում է քանդել աւերակները, — յանկարծ իր մէջքի հետևից լսում է աղաղակ, աղմուկ, ապստամբական ձայներ՝ նրա համագիւղացիք վրդովված են, նրա դէմ ապստամբվում են՝ „դու ինչ վերանորոգիչ ես, ինչ իրաւունքով երկրագործութեան նոր, չեղած ձևեր ես մտցնում մեր մէջ. իմացիր որ ակօսել գետինը քարերով և ծառերի արմատներով մեր մէջ աւանդութիւն է, իմացիր որ չորս կողմ գտնվող աւերակները մեզ համար սուրբ են, թէև գիտենք, թէ նրանցից դարերով ոչինչ օգուտ չենք քաղում... մի համարձակվիր ձեռք տալ մեր թէև անպէտք, բայց այնու ամենայնիւ սիրելի հնութիւններին, մեր թէև վնասակար, բայց այնու ամենայնիւ սիրելի պապական սովորութիւններին...."

Եւ մշակը տխրած տուն է վերադառնում։ Նա խոր մտածութեան մէջ ընկած, ինքն իրան ասում է՝ „կամ պէտք է անեմ ինչպէս ուրիշներն են անում, պէտք է հետևեմ ընդհանուր հոսանքին, կամ պէտք է ինձանից առաջ գար մի այլ մշակ, որ դեռ հողը չը մշակած իր ամբողջ կեանքը պէտք է նուիրէր քանդելուն...."

⁂

Այդ դրութեան մէջն է մեր հայոց սիրելի հասարակութիւնը։ Նա բարձրաձայն աղաղակ է գցում, վրդոված ապստամբվում է նրա դէմ, որ համարձակվում է քանդել անպէտք աւերակներ, հնամոլ կարծիքներ, պապական վնասակար աւանդութիւններ, արմատացած նախապաշարմունքներ....

⁂

Բայց եթէ լաւ մտածենք, ուրիշ կերպ վարվել անկարելի է։ Եթէ դաշտը բռնած է, եթէ նրան ազատ կերպով վարել անհնարին է, — չէ՞ որ պէտք է նախ քանդել, հեռացնել զանազան արգելքներ և յետոյ արդէն (գուցէ ապագայ սերունդը այդ կանէ), սկսել հանգիստ կերպով վարել հողը, մշակել դաշտը, սերմը ցանել....

Այդ է պատճառը, որ խեղճ „Մշակի" վրա այդքան շատ են յարձակվում։

Նրանք, այդ խելօքները, ուզում են որ մի հին տան աւերակը չը քանդած, նրա տեղը նոր շինութեան հիմքը գցես։ Եթէ այդքան հանճար ունես, այդ հրաշքը գործիր.... ասում են մեզ ամեն կողմից խելօքները.... Անկարելի է, պարոններ խելօքներ, հրաշքների դարը անցաւ....

Չէ, չէ, աղաղակում են, շարունակիր վարել արօրով, հողից քարերը և փտած արմատները չը հանած....

Եւ ինչքան բազմացել են այդ անպէտք աւերակների և փտած արմատների պաշտպանները։ Որ պ. Էրիցովն էլ մեզ դէմ է, — այդ մենք հասկանում ենք և նրան բոլոր սրտից ներում ենք... որովհետև նա իր կտոր հացի համար է աշխատում։ Եւ ճշմարիտ, նա ի՞նչ պէտք է անէ, եթէ բոլոր հնութիւնները և աւերակները քանդվեն, — չէ՞ որ նա մանկապէս հնագէտ է... խօ չէ կարող նորից գիմնազիայի չորրորդ դասատունը մտնել, որ դարձեալ սկսի նոր բան սովորել... նրա գործն է՝ հնութիւնը, հնաբանութիւնը, հնագիտութիւնը, հնամոլութիւնը, հնասիրութիւնը, հնավաճառութիւնը, հնակարկատութիւնը, — մի խօսքով բոլորը ինչ որ հին և հնա մասնիկով է սկսվում (բաց արէք բառարան և կարդացէք)։ Թողնում ենք նրան այդ բոլոր հնա-հնա-ները, խղճում ենք խղճին և ներում ենք....

Բայց ուրիշները, որք անպատճառ կը վիրաւորվէին, եթէ նրանց հին մասնիկը կպցնես, — դրանք ինչ են ուզում մեզանից.... Զանազան „Մեղուներ", „Кавказъ-ներ" Ստալինսկիներ, Nemo-ներ.... այն ամենքը որոնք պարծենում են իրանց նոր (?) մտքերով։ Էլ չեմ խօսում „Մասիսի" կամ այլ այդ տեսակ ինքնահաւանների մասին....

⁂

Չէ «Մշակի» դրութիւնը շատ ողորմելի է՝ այն օրին հասանք, որ մինչև անգամ Զմիւռնայի «Արշալոյս Արարատեանն» էլ մեզ քննադատում է... Այդ լրագիրը արտատպելով մեր լրագրից «Կ. Պօլսի հայոց լրագրութիւն» վերնագրով յօդվածը, իրան թոյլ է տալիս պատասխանել մեզ։ Բայց ինչպէ՞ս, — ինչպէս և կարելի էր սպասել Թիւրքիայում հրատարակվող մի հայոց լրագրից՝ երեխայական, վայրիվերոյ, միամիտ, անկապ կերպով... Նախ և առաջ մեր գործածած և ամբողջ Եւրոպայում ընդունված ինտելիգենցիա բառը լրագիրը թարգմանում է ուշիմութիւն բառով, այն ինչ ամենքին յայտնի է, որ ինտելիգենցիան նշանակում է՝ մի հասարակութեան մտաւորապէս զարգացած մասը։ Մի հասարակութեան մէջ մտաւոր զարգացման ամենաբարձր կէտի վրա կանգնած անձինքը՝ կազմում են այն հասարակութեան ինտելիգենցիան։ Իսկ Թիւրքիայի հայերի մէջ այդ ինտելիգենցիան էլ համեմատաբար մտաւոր զարգացման շատ ստոր աստիճանի վրա է կանգնած։ Հայ խմբագիրները Թիւրքիայում ոչ թէ միայն բարձրագոյն ուսում ստացած անձինք չեն, բայց նրանց մէջ շատ քիչեր կան որք փոքր ի շատէ օրինաւոր միջնակարգ ուսում էլ ստացած լինէին։ Բայց այնու ամենայնիւ նրանք իրանց ուսումնական են կարծում... Նրանք երևի մի գաղտնիք են գտել՝ առանց երբեք որ և է հիմնաւոր ուսում առնելու՝ ուսումնական դառնալ... «Քանզի Կ. Պօլսոյ հայ լրագրապետաց մեծագոյն մասն բաւական ուշիմութիւն և լեզուագիտութիւն ունին», ասում է «Արշալոյսը»... Ասացէք խնդրեմ, ձեզ հետ ո՞վ էր խօսում լեզուագիտութեան վրա... Շատ անգամ չափից դուրս մեծ յիմարութեանը մարդը նրան տանջում էր յաղթութիւնը, ճնշված Թշնամին (Ֆրանսիա) խնայում էր, փող էր աշխատում, յետ էր դարձնում իրան կորցրած միլիարդները: Յաղթութեան և նուաճման հետևանքն էր՝ քիչ օգուտ և շատ հարկեր:“

Յետոյ հեղինակը աւելացնում է՝ „Այդ դեռ ամենավատը չէ. այդ պատերազմը առաջ բերեց մեզ մոտ մասսայի մակերեւոյթը: Ամեն տեղ նկատվում է անկում և գիտութեան մէջն էլ: Մի ժամանակ երբ ես գնում էի գրավաճառի մոտ, ես միշտ մի բան էի գտնում, իսկ այժմ պատահում է յաճախ, որ հազիւ խանութի դուռը բաց եմ անում, ինձ ներսից կոչում են՝ ոչինչ նշանաւոր չը կայ: Մեզանում էլ ինքնաքննութիւն չը կայ, միայն հիանում են, կարծում են մի բան են արդիւնաբերել, երբ միջակ գրվածները լցնում են մեծ և ձայն հանող ֆրազներով Գերմանիայի կոչման վրա, որին իբր թէ վիճակված է փրկել աշխարհը, երբ հիանում են գերմանական ոգով, գերմանական առաքինութեամբ, գերմանական գիտութեամբ և արհեստով և այլն...“

Մենք սորան միայն մի բան կաւելացնենք՝ Թշուառ չէ այն ազգը, որ ունի Կարլ Ֆօխտի պէս ազատախօս քաղաքացիք:

Գ. Ա.

ԹՈՒՐՔԻԱ.

Թիւրքաց կառավարութենից լրագիրներին հաղորդված պաշտօնական մի ծանուցում ծանուցանում է թէ կայսերական հրամանով հետևեալ տնօրէնութիւնն եղած է տէրութեան նախարարների և բարձրաստիճան պաշտօնատարների ամսական ռոճկի վերաբերութեամբ: Մեծ եպարքոսի ամսականը յիսուն հազար դուրուշի իջած է. գաւառների կուսակալները երկու կարգի բաժանվելով, առաջինները 25,000 դրշ., իսկ վերջինները 20,000 դրշ. պիտի ստանան: Արտաքին գործերի և հասարակային կրթութեան նախարարները, մեծ-եպարքոսի միսթէշարը, մաքսատների վերատեսուչը, Տէֆթէրհանէի վերատեսուչը և Կ. Պոլսի քաղաքապետը 20,000 դրուշ պիտի ստանան: Օտար երկիրներում գտնւող Օսմանեան դեսպանների, ֆէրիքների, շիվանների, ինչպէս նաև պայմանագրութեամբ որոշած ամսականները չը պիտի զեղչվին: Բացի սորանից 3000 դուրուշից բարձր եղած ամսականները աւելին կիսով պիտի զեղչվին: Օրինակի համար 4000 դուրուշ ամսական ստացողը, պիտի 3500 դրշ. ստանայ, 6000 ստացողը միայն 4500 և այլն: Այս տնօրէնութիւնը ներկայ յուլիս ամսի սկզբից արդէն գործադրվում է: Յոյս ունին որ այս միջոցով արքունի գանձի մէջ մեծ խնայողութիւն կը լինի:—Մենք մեր կողմից Թոյլ կը տանք մեզ նկատել, որ 'ի հարկէ Թիւրքաց տէրութեան համար այդ շահաւէտ բան է, բայց հազիւ Թէ ժողովուրդը այդ տնօրէնութենից գոհ կը լինի: Յայտնի է որ ոչ մի երկրում այդքան սարսափելի չէ պաշտօնեաների մէջ կաշառակերութիւնը և հարստահարութիւնը, որ իսկ մոնղոլական մի յատկութիւն է: Ուրեմն քանի Թիւրքիայի տէրութիւնը խնայողութիւն կանէ և կը պակասեցնէ իր պաշտօնեաների ռոճիկները,—այնքան այդ վերջինները կը գողանան ժողովրդից: Առ միշտ խեղճ ժողովրդի վզին են ընկնում այդ տեսակ խնայողութիւնները:

Պէտք է խոստովանած, որ բաղդ չունի այդ խեղճ Թիւրքիան իր վերանորոգութիւններով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 8-ին վախճանվեցաւ երկարատև հիւանդութենից յետոյ Թիֆլիսի կուսանաց վանքի մայրապետ Հռիփսիմէ, իշխանուհի Բէգթաբէգեանց 82 տարեկան հասակում. Թաղումը կատարվեցաւ օգոստոսի 10-ին, կիրակի օրը:

⁂

Կօջօրից հաղորդում են, որ վաղ ուրբաթ օրը, օգոստոսի 15-ին լինելու է այդտեղ պ. Բերգմանի կոնցերտը, պ. Գրօսլլոյի և տիկին Եչընբախի մասնակցութեամբ: Նոյն տեղից հաղորդում են որ հայոց եկեղեցու շինութիւնը աւարտված է և օգոստոսի 17-ին, կիրակի օրը պիտի օծուի:

⁂

Լրագիրները հաղորդում են որ Երուսաղեմի մէջ անհաւանութիւն է ծագել հայերի և յոյների մէջ, որ պատճառ է բաւական մեծ խռովութիւնների:

Յայտնվում է պատուելի վաճառականներին որ մեր գործարանը, որ պատրաստում է զանազան փրփրող խմիչքներ և զանազան մրգերից ԼԻՄՕՆԱԴՆԵՐ, երկար տարիներով ստացել է ընդհանուր յարգանք Նովօրօսիյսկի նահանգում և խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր գների վրա, որք անհամեմատ նուազ են Մոսկվայի գործարանների գներից և ձեռնտու են Կովկասեան առևտրականներին, Թէ գնի, Թէ ճանապարհի ծախսի կողմից:

Մի և նոյն ժամանակ մենք պէտք է նկատենք, որ մեր մրգերի ԼԻՄՕՆԱԴՆԵՐ, պատրաստած լինելով ամենայն եղանակով, չեն ենթարկվում որ և է փչանալու Թէ ճաշակի կողմից Թէ գոյնի կողմից ամբողջ տարվայ ընթացքում և աւելի, որով տրվում է պ. պ. առևտրականներին մի միջոց ունենալ իրանց մոտ այդ զովացուցիչ խմիչքների բաւական մեծ պաշար, առանց երկիւղ կրելու որ փչանան:

Գները մրգերից շինած լիմօնադներին՝ Կեռասի, Վարդի, Մորիի, Վանիլի, Նարինջի, Տանձի և Անանասի,—12 կոպ. մի կէս շամպայնանոց շիշի համար և 7 կոպ. մի բաժակ պարունակող շիշի համար.

Ամանի համար վերցնվում է՝ առաջինի համար 7 կոպ., իսկ երկրորդի համար 5 կոպ.

Պատուէրներով խնդրում ենք դիմել մեր Ֆաբրիկա ՕԴԷՍՍԱՅԻ մէջ Կօբլէվսկի փողոցում, Վորոնիչի տանը (*Одесса.* Коблевская улица, домъ Воронича) կամ պ. Կ. Ի. Տիսէնին Թիֆլիսում, որտեղ կարելի է տեսնել և մեր լիմօնադների օրինակներ: 10 (10)

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը նշանակում է աճրդախօսութիւն և երեք օրից յետոյ կրկնաճրդախօսութիւն կապալաւ տալու նոյն Դպրոցի լուսաւորութեան և գիշերօթիկ որդեգիրների սննդեան ծախքը: Պայմանաթուղթը ցանկացողք կարող են կարդալ Հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամն կէսօրի և նշանակեալ օրը ներկայանալ նոյն Դպրոցումը Հոգաբարձական խորհրդարանի մէջ օրինաւոր գրաւականաւ, որ պիտի լինի կամ՝ բանկի տանուն տոմսակ և կամ առ ձեռն դրամ համաձայն պայմանաթղթին: Աճրդախօսութիւնը լինելու է օգոստոս ամսոյ 23 ին և կրկնաճրդախօսութիւնը 27-ին, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամն կէսօրի: 1 (2)

Շուտով լոյս կը տեսնի մի նոր վիպասանական հեղինակութիւն «ԵՐԿՈՒ ԹՈՒՄԲ կամ ԽԵՂՃ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ» անունով:

Այս գրքի բովանդակութիւնը նուիրված է գիւղական կեանքին և գրուած է բոլորովին գիւղական բարբառով և մատչելի կացուցած ընթերցողին մի ջոկ բառգրքոյկով, որը յաւելցրինք գրքի վերջում: Աչքի առաջ ունենալով քանի մի հանգամանքներ. մենք բացեցինք ստորագրութիւն պ. պ. Եփրեմ Ծատուրեանի լամպերի մագազինում, Զաքարիայ տէր Գրիգորեանի գրատանը և Համբարձում Ենֆիաճեանի ծխախոտի մագազինում, որի համար և խնդրում ենք հասարակութենից (առաւել հոգևորականներից) չը խնայել կամաւոր դրամական օգնութիւն: Գրքի գինը 20 կ. է: Ստորագրվողների անունները կը տպվեն գրքի վերջում և նորանցից ամեն մինը կը ստանայ այնքան օրինակ, որքան ինքը յառաջուց բաժանած էր:

Ալէքսանդր Արարատեանց

1875 ամի յուլիսի 15 3 (3)

Թիֆլիսի տղայոց ԳԻՄՆԱԶԻԱՅԻ վարչութիւնը պատիւ ունի յայտնել նոցա, որք ցանկանում են տալ այդ ուսումնարանը իրանց երեխաներին և ազգականներին, որ ընդունելութեան հարցաքննութիւնները (և նոյնպէս Նախա-հարցաքննութիւնները) Գիմնազիայի աշակերտների կը կատարվին ներկայ տարին Օգոստոսի 22-ից և մինչև Սեպտեմբերի 1-ը, ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 2-ը, բացի կիրակի և տօն օրերից: Թիֆլիսի գիմնազիա մտնողները պարտաւոր են ունենալ հարկաւոր դօկումէնտները, և նոյնպէս համապատասխանել ուսումնական կանոնադրութեան պահանջներին Թէ իրանց հասակով, Թէ գիտութենով: Ներկայ Թւին կարող է ընդունվել Թիֆլիսի Գիմնազիա աշակերտների հետևեալ Թիւը՝ պատրաստական դասատուն երկու բաժանմունքների,—20 հոգի. 1-ին դասատուն,—15 հոգի, 2-րդ դասատուն 10 և 3-րդ դասատուն 6 հոգի. վերջապէս 4-րդ դասատուն 12 հոգի: Բացի սորանից կարող են մի քանի աշակերտներ ընդունվել 6-րդ և 8-րդ դասատները: Իսկ 5-րդ և 7-րդ դասատներում բոլորովին ընդունելութիւն չի լինի:

Բոլոր հարկաւոր տեղեկութիւնների համար, Գիմնազիա մտնելու վերաբերութեամբ, կարելի է դիմել դիրեկտորի կանցելեարիա, ամեն օր 9 ժամից առաւօտեան մինչև 1-ը կէսօրի:

Դիրէկտոր Գիմնազիայի

Մարկով

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ գիմնազիստ ցանկանում է ԴԱՍԵՐ տալ գիմնազիական բոլոր առարկաներից մինչև 6-րդ դասատունը: Հարցնել „Մշակի“ խմբագրութեան մէջ: 6 (10)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ ԵՒ ԼՈՅՍԻ ՄԱՍԻՆ» ծախվում է „Մշակի“ խմբագրատան մէջ, պ. պ. Ալէքսանդր Շահազիզեանի և Աւէտիք Ենֆիաճեանցի գրավաճառանոցներում, նոյնպէս փոխադրողի մոտ այս հասցէով чрезъ Ахалцихъ въ г. *Ахалкалаки*, Баграту Пичикянцу.“ Գինն է 25 կոպէկ: 2 (2)

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ՕԳՈՍՏՈՍԻ 14. ԹԻՖԼԻՍ. 1875.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Օգոստոսի 13-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպէրիալ)	5	88
Բամբակ Երևանու	5	20
„ Ամերիկայի սերմից	—	—
Բուրդը Թուշի	7	80
Թարաքամի	4	50
Շաքարը ռաֆ (բրօցկու)	8	30
„ մեւ տեսակը	8	—
„ դաղրան, տրանդիտ	4	50
„ մաքուր վճարած	7	55
Շաքարաւազը Ռուսի	6	80
Ղահվա Լիփանի լաւը	17	—
„ Մօկօ շատ լաւը	19	—
„ Մարտինիկօի ցածր	12	—
Ալիւրը Երևանի	1	—
Ալիւրը Գեանջու հասարակ	1	—
„ Շորագեալու	1	5
Գարին	—	60
Մոմ	10	40
Փոխանակագիր Պոլսի	6	50
„ Գամբէժի	4	39
Լոնդոնի կուրսը (Օդեսայի վերայ) 1 լիրան արժէ	7	21^{1}
Մարսէլ և փարիզ $350\frac{3}{4}$ ֆր. արժէ	100	

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի գլխաւոր քաղաքները	1	
Նոր-Նախիջևան	1	
Մոսկվայ, Ս. Պետերբուրգ. Նիժնի-Նովգորոդ	2	
Աւստրիա	2	75
Անգլիա	3	75
Գերմանիա	2	63
Թիւրքիա	3	
Ֆրանսիա	3	50

ՆԱՒԵՐ (Շրջական գիծ)

Օդեսայից փօթի (ամառը) հինգշաբթի ժամը 2-ին կէս օրից յետոյ:

փօթիից Օդեսա կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ:

Օդեսայից փօթի (ձմեռը) հինգշաբթի 3 ժամին:

փօթիից Օդեսա հինգշաբթի առաւօտեան:

փօթիից Կ. Պոլիս երկուշաբթի առաւօտները:

Կ. Պօլսից փօթի կիրակի առաւօտները:

(Ուղղակի գիծ)

Օդեսայից փօթի երկուշաբթի 3 ժամ. կէսօրի:

փօթիից Օդեսա Շաբաթ 8 ժամ. առաւօտ:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև փօթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ առաւօտեան: Մինչև Սուրամ (խառն գնացքը) երեկոյեան 8 ժամ. 17 րոպէ:

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից	8. 18	8. 17
Մցխէթ	9. 18	10. 48
Գօրի	11. 39	1. 43
Սուրամ	1. 52	4. 30
Քութայիս	7. 55	
փօթի	11, 27	

	առաւօտ.
փօթիից	7. 38
Քութայիս	10, 12
Սուրամ	4. 57
Գօրի	7. 23
Մցխէթ	9. 52
Թիֆլիս	10. 49

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ:

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ	5. 22	3. 92	2, 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
փօթի	13, 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ընդունում է

Ռուսաստան և Եւրոպա ամեն օր, բացի կիրակի:

Երկուշաբթի

Երևան (Ջուլֆ, Պարսկաստան), Օզուրգէթ, Ախալցխա, Բէլի կլիւչ, Բագուի և Գանձակի նահանգ (ծանր փօստ):

Երեքշաբթի

Սև և Ազօվ ծովի ռուս նաւահանգիստներ (ձմեռը) Բագուի և Գանձակի նահանգներ (թեթև փօստ): Նուխի (Ցարսկի կոլօդցի, Զաքաթալ, Սղնախ, Թէլաւ, Լագօդեխ) թեթև փօստ:

Չորեքշաբթի

Երևան, (Ջուլֆ, Ալէքսանդրապօլ, Նոր-Բայազիդ) Զուգդիդ:

Հինգշաբթի

Սև և Միջերկրական ծովի առճկաց նաւահանգիստներ:

Ուրբաթ

Երևան (Ջուլֆ, Պարսկաստան, Ալէքսանդրապօլ) Օզուրգէթ, Ախալցխա, Բէլի կլիւչ, Սև և Ազօվ ծովի ռուս նաւահանգիստներ, (ամառը), Բագուի և Գանձակի նահանգները (թեթև փօստ):

Շաբաթ

Նուխի, (Ցարսկ. կոլօդ. Զաքաթ. Սղն., Թէլաւ).

Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու կէտեր ամեն օր, բացի կիրակի:

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակը աժէ	4
Ռուսաստան նամակը	8
Գերմանիա, Աւստրիա	8
Ֆրանսիա	13
Անգլիա	8
Շվէյցարիա	8
Թուրքիա (Կ. Պօլիս)	20
Թիւրքիա (ցամաք)	20
Իտալիա	8
Ամերիկա	28
Պարսկաստան	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս ամեն օր ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին:

Թիֆլիսից Պետրովսկ, Ստավրոպօլ և Ռօստով հինգշաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

(Օգոստոսի 5-ին)

Լոնդոն մի րուբլ աժէ $33\frac{5}{16}$ պէնս (փոխանակ 40 պէնս):

Փարիզ մի րուբլ աժէ $348\frac{1}{2}$ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ):

Առաջին 5% փոխառութեան տոմսակ	256
Երկրորդ	252
5% բանկի տոմս. 1 շրջանի	$99\frac{1}{2}$
„ „ 2 „	$99\frac{1}{2}$
„ „ 3 „	—
5% րէնտա	104
Ազօվ-Դօնի բանկի ակցիաներ	200
Օդէսայի Առևտր. բանկի ակցիաներ	—
Ս. Պետերբուրգի քաղաքային կրեդիտի ընկերութ. օբլիգացիաներ	$92\frac{5}{8}$

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Բագու: Ա. Քալանթարեան: Շնորհակալութեամբ ստացանք ձեր ուղարկած երկու հեղինակութիւնները: Նրանց մասին կը խօսենք:

—Ղզլար: Ա. Կ. Եթէ ի նկատի կունենանք մի վարժապետ և մի վարժուհի,—կը հաղորդենք:

—Թիֆլիս. Տ. Ղ. Շատ ուրախ ենք որ յանձն էք առնում աշխատակցել «Մշակին» և հաղորդել մեզ «Ակնոցի» լրագրից քաղվածներ:

Дозволено цензурою 14 Августа 1875 г. Тифлисъ
Типографія Меликова
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ